63. ԴԱՐՎԵՇՆ ՈՒ ԹԱԳԱՎՈՐԻ ՔՈՒՐ

Կէղնի, չէղնի թագավորըմ ու ուրին խորոտիկ քուրըմ. թե՛ թագավոր, թե՛ փաշա, որն օր կիգա ախչիկ կուզե, ախպեր չի տա, անուն չղնե, ուր քուրոշ չի տա։

Սորա գարվեշըմ կծռի վըր էգ ախչկան, հ՚ըմն օր կիգա, կանի թագավորի գուռ, կղարկե, զարկե զգաֆ խելք կէրթա կընկնի գետին. կվերցուն կառնին կէրթան։ Ավուրըմ մեկ լէ կէրթա զուր դաֆ կզարկե, թագավոր մեկըմ կճամբե, կասե.—Գնացեք տեսեք էդա դարվեշ ի՞նչ կասե։

Կիգան կասին.—Դարվե՛շ, քու ասածն ի՞նչ, հ՚ըմն օր կիգաս դաֆ կզարկիս էդա տեխ, ուշքդ կընցնի, կվերցուն զքզիկ կառնին կէրթան։

Կասե.—Խուրբան էղնիմ ձրզիկ։ Գացեք ասեք թագավորին հեղըմ զիս թըղ հանե ուր հ՚էրես, բանըմ կասիմ ու կթորկիմ կէրթամ։

Կառնին զէդ դարվեշ կէրթան թագավորի խեչ։

Թագավոր կասե.—Դարվե՛շ, գու հ՚ո՞րի հ՚ըմնօր կիգաս դաֆ կզարկիս իմ քոշկ ու սարի դուռ, ուշքդ կէրթա, կիգան կվերցուն զքզիկ, կտանին թալին քու տուն։

Դարվեշ կասե.—Թագավո՛ր ապրած, քինե պահիմ, աստծուց ի՞նչ պահիմ, իմ աչք հ՚ընկեր քու քուր, էկեր իմ օր զքու քուր իտաս ընծիկ։

Թագավորն կասե.—Շատ աղեկ, կիտամ, քզիկ բանըմ կասիմ, օր էրթաս բերիս, կիտամ, առնիս էրթաս։

Կէլնի ուր խազինի մեշ ալթ-ուսթ կէնե, թոփրմ խումաշ կը-գրանա, կառնե, կիգա։ Կառնե կիգա։ Կասե.—Էդա թոփեն թոփրմ խումաշ էրթաս բերիս, կիտամ զիմ քուր, առնիս էրթաս։

Դարվեշ ղձեռք կդնե ծոցք ու կշիվարի մնա. «Ջանրմ, էդա թոփ կաժե էրկու-իրեք հարիր օսկի, ես էրկու-իրեք հարեր օսկի հ՚ո՞ւստեն գտնամ, տանիմ թոփրմ խումաշ առնեմ բերիմ»։

Դարվեշն է, կէլնի զուր քաշքուր կէձգե ուր վեզ, թըրզեղ կթա-լե թևնրվեր ու կընկնի ճամբախ։

Էդա քաղաք չէ, էդա քաղաք, էդա քաղաք չէ, էդա քաղաք, կիգա Հընտու քաղաք, կիգա Հընտու Յամանու թագավորի հող կէլ-նի դուս։ Կէրթա շուկեն կօլըրդի, ծանդր թուճարրմ կտեսնա, կհա-նե նմուշ կիտա ձեռք։ Կասե.—Էդա խումաշից, հ՚ո՞ւր կա ծախու։

Թուճարն կասե.—Իմ դուքան կա, քելե էրթանք՝ իտամ։

Կառնե ղդարվեշ կիգա ուր դուքան, կբերե զթոփ կցուցու, դարվեշ կդնե զուր կտորն ու զէդ թոփ հ՚իրարու խեչ, կտեսնա օր էրկուս լէ մեկ կտոր ին։

Կասե.—Այնան էդ է, գին ի՞նչ է։

— Էդոր գին իրեք հարիր օսկի,—կասե թուճար։

Դարվեշն կասե.—Թուճար, իրեք հարիր օսկի ընծիկ հ՚ո՞ւադ է, ես իտամ քզիկ, առնեմ զէդ թոփ։ Ալու քեֆյաթ հըմլա է, ես գացեր իմ զթագավորի քուր հ՚ուզի, թագավոր դրեր է վըր ընծիկ, թե՝ «էդա խումաշեն թոփրմ խումաշ կէրթաս բերիս, սորա կիտամ զիմ քուր առնիս էրթաս»։ Թուճար բաշի, ուխտ ու խըրատ էղնի աստծու հ՚առջև, էկո զէդ թոփ խումաշ տուր առնիմ էրթամ, պսակ-վիմ, եբ առա զթագավորի քուր, վահդ էղնի, չուր զքու փարեն չբերիմ իտամ, իմ կնկա յաթախ չէրթամ։

Թուճար կիտա զխումաշ դարվեշին, կառնե կիգա, կբերե կի-տա թագավորին։ Թագավոր կիտա զքուր, կառնե կէրթա։

Դարվեշ օր զթագավորի քուր կառնե կէրթա, հ՚իրկուն կէդնի կնիկ կէձգե զուր տեխ օր պառկին, դարվեշ կբերե զուր փոսթ, կթալլե գետին կառնե զուր դաֆն ու կնստի, հար լուս կզարկե ու կկանչե։

Էն օր կընցնի, օլոր օր, մեկ լէ էն օյօյիկ, շաբաթրմ էդ հըմ-լա թագավորի քուր կընցու, կտեսնա օր ճար չէղնի, կէլնի լալ-մանց կէրթա գինք կթալե ախպոր օտաց։

Ախպերն կասե.—Քուրի՛կ, խեր էղնի։ Ի՞նչ է էգի։

Քուրն կասե.—Էլ ի՞նչ էղնի, էդա տաս տրսնուհինգ օր կէնի,

օր դարվեշ տարեր է զիս, հ՝ըրկուն կթալիմ զտեխ օր հ՝իգա պառ-
կի, փոսթըմ կա, կբերե թալե տակ, զդաֆ կառնե ու կնստի, հար
լուս կհաշա, ի՞նչ է կհաշա, ես լէ չըմ դինա, վախենալուս սրտիս
թել կտրեր է, չըմ հ՝իշխնա քնի, կանչե տեսնաք, էդ հ՝որի՞ն զէդ
օյոյիկ կէնե իմ գլուխ, ընծիկ չհավնի, ի՞նչ է։

Կկանչե զդարվեշ, կբերե, կհարցու։

Կասե.—Դարվեշ, դու հ՝որի՞ն իմ քուրոջ խեչ չըս պառկի,
չէղնի՞, չըս հավնի իմ քուրոջ։

Դարվեշ կվերցու կասե.—Թագավո՛ր ապրած, քինե պահիմ,
աստծուց ի՞նչ պահիմ, ալ ու քեֆյաթ հըմլա է, դու չասի՞ս, դար-
վեշին էրկու-իրեք հարիր օսկին հ՝ուսդե՞ն էր տվեց, զէդ թոփ
խումաշ առավ ու էկավ։ Գացի թուճրիմ՝ հ՝ըռաստ էկա, պատմեցի
զիմ գլխու գալած, տվեց առա, էկա։ Օր առա էկա, հ՝երդում էրի
չուր զթուճրի փարեն չտանիմ իտամ, իմ կնկա խեչ չպառկիմ։

Թագավոր հանեց զիրեք հարիր օսկին։

Ասեց.—Դը օր հըմալ է, տար տուր զթուճրի փարեն, էկո պառ-
կի քու կնկա խեչ։

Դարվեշն առավ զփարեն գնաց, տեսավ օր նը՛ թուճար կա,
նը՛ դուքան։ Հարցուց դըրկիցներուց։

Դրկիցներ ասին.—Էն մարդ ծըռեր է, գացեր է մտի ֆըլան
հ՝առուն։ Ցուցուցին զտեխ։

Դարվեշ հ՝էլավ գնաց, տեսավ օր էդ մարդ մտուկ է հ՝առվի
մեջ, ձեռք առեր է մազըմ, կզարկե ջրի մեջ, կվերցու բաժկանց
ջուր կչըռչըռա, կթափի առվի մեջ։ Կասե. «Ալլահ վերանդա բոյլե
վերեր»*։ Թափած ատեն լէ կասե. «Ալլահ ալանդա բոյլե ալեբ»**։

Դարվեշ կասե.—Թուճա՛ր, արի զքու խումաշի գին իտամ։

Թուճար իսկի ականճ չէնե։

Դարվեշ կթորկե օր հ՝իգա, թուճար մեկ լէ կզարկե զմաղ ջրի
մեջ օր կասե. «Ալլահ վերանդա, բոյլե վերեր», կհանի ի՞նչ հանե
մազըմ լիք անգին քար։

Շուտըմ կախլի, խելք կիգա գլուխ, զդարվեշ կկանչե.—Դար-
վե՛շ, դարվե՛շ, արի զքու պարտք տուր, սորա թող գնա։

Դարվեշ նոր կդառնա կիգա, բերե զուր պարտք կիտա, կթողե
կիգա ուր տուն։

---

* Ասված տա այսպես կտա (Ս. Բ.)։

** Ասված առած ատեն այսպես կառնե (Ս. Բ.)։